

պատմէ անդ գհերծուածս թէողորոսի միաբնակի ուրումն, որուն պատմութիւնն եղած է ստոգիւ Միքայելի ժամանակագրութեան ասորերէն բնագրի վերջին մասի մէջ. բայց սակայն, հանգոյն շատ մի ուրիշ իրողութեանց<sup>1</sup>, զուրս թողուած է հայերէն թարգմանութենէն մէջ. Պատճառը չկայ, որ Միքայէլ՝ բաց ՚ի ժամանակագրութենէն եկաղեցական պատմութիւն մի ևս գրած լինի. Կը յուսամք թէ գեր. Որէմանի շուտով պիտի ընծայէ մեզ հրատարակութեան մի թարգմանութեամբ հանդերձ մեծագանձ ժամանակագրութեան, զոր ուսումնասէրք նորա չնորիւ վերստին ստանալու բաղդն ունեցան :

Առ այժմ Գուիդեայ մեզի ընձեռած սոյն համառօտ տեղեկութեամբ բաւական լինելով կը յուսամ թէ հրատարակութենէն յետոյ դարձեալ առիթ կ'ունենամ, վերոյիշեալ երկասիրութեան մասին ընդարձակ տեղեկութիւններ և տալ բաղդատութեամբ հայերէն թարգմանութեան :

Հ. Բ. Սարգսոս

### «ԵԶՆԿԱՑ ԱՌ ՍՈՒՐԲԻՆ ՄԱՇՏՈՅ»

Այս վերնագրով հրաշարան հատուած մի գտնելով ՚ի մագաղաթեայ ձառնափրն իբ ՚ի վերայ ամենասուրբ Հաղորդութեան<sup>2</sup>, կը հրատարակեմք ՚ի վայել և յուսումն մերայնոց :

«Իբրև զիւր մարմին և ոչ իբրև զմարդոյ ուրուք՝ առանց Աստուծոյ բանին իմանալ է զմարմինն, որպէս գանդաշչէն նշատորիսու իւ ոմանք յարմեւեացցն (?) այլ բնափեալ մարմին և նորին արին նկղան ՚ի փրկուրին աշխարհի. զի մարդու մարմին ՚ի քատորին աշխարհի ոչ կազ շինեց, այլ Աստուծոյ մարմին. նոյն ին Աստուծու և թրդի Աստուծոյ արժանի արար լինել մարդ, տասնց շրջեց և փափսնեց յիւրի աստածական եռորենքն : Եւ ոչ այլ ուրուք են ծառայական կերպարանքն զոր առ իւր, որպէս զի ոչ այլ ուրուք աներեւոյթ պատկերն Աստուծոյ յորմէ ծնաւ : Եւ է նորին պատկեր կերպարանց : Եւ ոչ ասի Տերունական մարմինն յետ միու թեան Աստուծածութեան և մարդկութեան անդստախն ՚ի ծննդենէ և յորովոյն մարմին մարդոյ, այլ մարմին Աստուծոյ, զոր առ ՚ի մարմնաւորաց, և վասն այնորիկ է քաւութիւն ամենայն աշխարհի » :

Արդ այս պատաժէս թէ ըստ ոսկեղենիկ շարաբանութեան և թէ ըստ խորիմասն վարդապետութեան Եղնկայ Կողբացւոյն արժանի և հորազատ ծնունդ կ'երեսի, ըստ իս, և մատնանիշ կը ցուցանէ մեզ նորա ուրիշ անյատացած երկասիրութիւն մի, որուն կը վերաբերի : Առ այժմ այսչափ :

1. Տես Լանգլուս, 11.

2. Զայս կը յիւտանէ ևս ՚ի մատնի իւրում Հեղինակն Հայկ. հին գպրութեանց